ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/128

«14» Ապրիլի 2020թ.

..

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի ապրիլի 14-ի թիվ 9-Ա և 10-Ա որոշումները:

Առդիր՝ 4 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» Ապրիլի 2020 թվականի N 9-Ա

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի ապրիլի 14-ի հերթական նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2020թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020թ. ապրիլի 14
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» Ապրիլի 2020 թվականի N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետով,«Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով՝ Ձորագետ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Ընդունել ի գիտություն Ձորագետ համայնքի 2020թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Ձորագետ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ
ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
2020թ. ապրիլի 14
հ. Ձորագետ

Հավելված
Զորագետ համայնքի ավագանու
«14» ապրիլի 2020թ. N 10-Ա որոշման

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Զորագետ համայնքի 2020վականի բյուջեի առաջին եռամսյակը կատարվել է.
Զորագետ համայնքի 2020 թվականի բյուջեի առաջին եռամսյակի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 1971.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 1816.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 108.5%: Ընդ որում՝ Զորագետ համայնքի 2020 թվականի բյուջեի առաջին եռամսյակի վարչական մասով ծրագրված (ճշտված) 1816.0 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 1971.0 հազար դրամ՝ ապահովելով 108.5% կատարողական:
Զորագետ համայնքի 2020 թվականի բյուջեով առաջին եռամսյակի սեփական եկամուտները ծրագրվել են 646.5 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 801.4 հազար դրամ կամ 124%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը պակաս է 2019 թվականի համապատասխան ցուցանիշից 108.0 հազար դրամով:
Զորագետ համայնքի 2020 թվականի բյուջեի առաջին եռամսյակի միջոցների հաշվին իրականացվել է 1604.3 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 78.6%-ը:
Հարկ է նշել, որ 2020 թվականի առաջին եռամսյակի ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:
Ստորև ներկայացվում է Զորագետ համայնքի 2020 թվականի բյուջեի առաջին եռամսյակի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:
Հարկեր և տուրքեր.
- Գույքահարկի գծով առաջին եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 124.4 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 46.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 207.4%, որը 2019 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է 57.5 հազար դրամով:
- Հողի հարկի մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 25.0 հազար դրամ, որը հավասար է 2019թվականի փաստացի ցուցանիշին :
- Տեղական տուրքերի գծով առաջին եռամսյակի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 640.5 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 600.5 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 106.7%, որը 2019 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 149.5 հազար դրամով:
Պաշտոնական դրամաշնորհներ.
Պաշտոնական դրամաշնորհների մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 1169.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 1169.5 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 1169.6 հազար դրամ:
Այլ եկամուտներ.
Զորագետ համայնքի 2020 թվականի բյուջեով առաջին եռամսյակի այլ եկամուտների գծով նախատեսված մուտքեր չեն եղել ,սակայն փաստացի հավաքագրվել է 11.5 հազար դրամ, որից.
- գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 11,5 հազար դրամ,
Ծախսեր
Զորագետ համայնքի 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 604.3 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 2042.1 հազար դրամի դիմաց կամ

ծրագրվածի 78.6%-ը:
Ձորագետ համայնքի 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	1200.0	986.3	82.2
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	50.0	0	0
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման	491.0	392.0	79.8
Վարչական սարքավորումներ	75.0	0	0
Հիմնական միջոցներ / նախագծահետազոտական ծախսեր/	226.1	226.0	100
Ընդամենը	2042.1	1604.3	78.6

Ձորագետ համայքնի 2020 թվականի առաջի ն եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	1816.0	1378.3	75.9
Տնտեսական հարաբերություններ / ճանապարհային տրանսպորտ/	226.1	226.0	100
Ընդամենը	2042.1	1604.3	78.6

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ